



ՄԱՐԻ ԱԹՄԱՆՑԱՆ

## ԷՇՄԱՆՆԻ ՄԵՂՐԱՄՈՒԾ

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Էջմիածնի խորանեն, գրշի եղբայր մ'ինձ քերակ  
Սա մեղրամումը դեղին.

Դայն վառեցի իրիկուն մը, լոյսին դեմ իր սակավ  
Օրազելու անձկազին....:

— Մո՞մ, փոքրիկ մոմ, բնական տարրերէ չես շինված դուն  
Խնշպիս մոմերն աշխարհի.

Քերողներու, սուրբերու, գրշագրերու մշտարբուն  
Աշքն ես որ մեղմ կարյունի....:

Որ կիալի ու կրկա, բայց շիրերն նեղակարծ  
Գիծ ու գույներ կծաղկին,

Թոշնազգիներ ման կու զան թերեն իրենց փոխ տված  
Հայ տառերու հրաշին....:

Աշերս հառած, խորասույզ, քու պլայուն պատրույզին  
Դեմ կմնամ զմայած.

Կանցնին դարերն հոգինս, և արարեներն Հայ Ցեղին  
Կուրվագծվին իմ դիմաց....:

Օ՛, բանի՝ նեղ մարեցար քամիներու դեմ դժխսմ  
Վանդալ շունչին ավերող.

Միշտ զաղտնունեն վառեցին շուշան ձեռքներ մեզ՝ վսեմ  
Մեր սուրբերուն դողն ի դող....:

Ու մեր անոնք ձերի տեղ իրենց սիրտը նետեցին,  
Որպեսզի միտք փայլի,

Եվ ճարակեզ բոցերուն դեմ, ճակասիով անմեկին  
Օրինեցին փառքը լուսի....:

Յոլացուցիր, փոքրիկ մոմ, գուցե անկյուն մը բափուր  
Ու Շնորհալին աղբքեց,

Ուր Միշտն Դարը եկավ ֆերպողներով բաղցրալուր  
Մեր Ռոկեղարը երկնեց....:

Անդաստանին մեջ ծաղկող, դուն կվառիս վերստին  
Էջմիածնի խորանեն,

Ա՛լ ապահով, ա՛լ խաղաղ Մրրիկներն մահածին,  
Փարոսի պես լուսեղեն....:

Անտեսելով ա՛յլ շահեր, ա՛յլ կերոններ փայլփլուն,  
Խորհրդանիշ՝ իմ փոքրիկ,

Քեզ մատներուս մեջ սեղմած, ճակած ճակատս խոկուն  
Քու տեսիլիքի բացառիկ՝

Պիտի երամ մեզ վառել Տաճարին մեջ սրբագույն....: